281.64
Բ 11 Բ
1863
գր. 2

Նվիրված Ա. Մայրաքաղաքս կրոց
ից
Ա. Յ. Դուրգարյանի Ուսումնարանին

ԲԱՂԵԱԼ Ի 715 ԵՒ 716 ԹՈՒՈՑ

ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Արշալուսոյ 708 և 709 թուոց մէջ, այսինքն Օգոստոսի 24ին և Սեպտեմբերի 7ին, ուրախ սրտիւ յայտնեցինք թէ վեհափայլ սրբազնասուրբ Կաթուղիկոսն բարեճաճեցաւ օրհնութեան կոնդակ մի յուղարկելու 'ի Կալկաթա յանուն արժանապատիւ սրբաբակրօն տէր Յովհաննէս Խաչիկեան խաչակիր աւագ քահանայի յիշեալ մայրաքաղաքին։

Հատոնցմէ 'ի վեր սպասեալ այս ցանկալի կոնդակը մեծ ուրախութեան և փութարութեան պատճառ եղաւ Կալկաթայի Հայոց մէջ, և Սեպտեմբերի 20ին առաւօտուն արժանաւոր հանդիսիւ կարդացուեցաւ 'ի սուրբ եկեղեցին նոյն մայրաքաղաքին 'ի ներկայութեան համայն բարեպաշտ ժողովրդեան. որոնք բազում ջերմեռանդութեամբ կրսիրեն և կը յարգեն իրենց վաստակաւոր հոգևոր Հայրը և իրենց բանիբուն և բարեհամբաւ Աւագերէցը. որուն բարեկարգ առաջնորդութեան խնամքը 18 տարի վայելեր են։

Կալկաթայի Նշանաւոր լրագիրը, իւր թուոյն մէջ որ 'ի 25 Սեպտեմբերի ներկայ տարւոյս, հետեւեալ կերպիւ կընկարագրէ այս պատկառելի և միանգամայն սրտառուչ հանդէսը. որուն վերայ մեր ընթերցողաց ծանր ուշադրութիւնը կը հրաւիրեմ։

ԱԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ամոյս 19ին մի յայտարարութիւն դուրս եկաւ տեղւոյս Նազարէթայ սուրբ եկեղեցւոյ աւանդատանէն, և շրջաբերեցաւ 'ի մէջ հասարակութեան Հայոց քաղաքիս։ Յիշեալ յայտարարութիւնն գրուած էր այսպէս.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Լիցի պատուելի հասարակութեան մերայնոց եղելոց ասա. զի կոնդակն եկեալ 'ի Նորին բարձր սրբազան տեառն տեառն Մատթէոս կաթուղիկոսէն ամենայն Հայոց՝ որ յԷջմիածին, յանուն սրբակրօն տէր Յովհաննէս Խաչկեան խաչակիր աւագ քահանային, և միւսն պարոն Սէթ Յ. Աբգարին՝ նշանագրեալ որպէս եկեղեցական, ընթերցեալ լիցի 'ի սուրբ եկեղեցւոջ մերում յառաջիկայ կիւրակէի 'ի 20երրորդում ամսոյս 'ի սովորական ժամու սրբոյ պատարագին ըստ կանոնին։

Զերոյ խոնարհ ծառայ.
Զեռագրեալ։) Կարապետ Վարդապետ՝ եկեղեցական Կալ.
կաթու և Զիչրու սրբոց եկեղեցեաց Հայոց։

Լսումենք որ նոյն օրն (ամսոյս 19ին) երեկոյին երեքին վիճակաւոր քահանայքն տեղւոյս, որոց երկուքն էին նոքա՝ որ բողոքագրի ճակատումն բոլորիս յառաջ ստորագրած էին (1861. Դեկտեմբեր 21), գնացած են անձամբ սրբակրօն խաչակիր աւագ քահանայ տէր Յովհաննէս Խաչկի տունն, և հրաւիրած են նորան որ յառաջիկայ առաւօտեան բարեհաճի նստաւալ յեկեղեցին. քանզի նոյն օրն պիտի որ ընթեռնուին սրբազան կաթուղիկոսի կոնդակն։ Հետեւեալ կիւրակէ առաւօտան ներկայացած է սրբակրօն աւագ քահանայն այն եկեղեցումն

և քանզի մեք տարաբախտաբար տակաւին բանդումն լինելով չկարողացանք ներկայ գտանիլ սուրբ տանն նոյն օրն, մեր մին բարեկամի գրած նամակն օրինակեցինք 'ի ներքոյ, որ ինքն ներկայ և ականատես լինելով հանդիպին, այսպէս կնկարագրէ նոյնն։

Թուիթամ ցնծութեամբ, արդոյ վերատեսուչ, տալ քեզ զնկարագիր հանդիպի ներկայութեան յեկեղեցւոջ այսմ աւուր նորին արժանապատուութեան խաչակիր տեառն Յովհաննու Խաչիկեան աւագ քահանայի. զոր նկարագիր, որպէս կարծեմ, հետաքննին յոյժ լինելոց է և ցանկալի ձեզ և ընթերցողաց լրագրոյդ, եթէ կամ ինչ իցէ այնպիսի հաղորդել զայս լուր և նոցա միջոցաւ «Եղբայրասիրիդ։

Այն ինչ յեկեղեցւոջ էաք յայսմ առաւօտու և մինչ պիրն երգին զերգն «Խորհուրդ խորին» յանկարծ ասի լսելի եղև շառաչիւն ինչ երկնի կառաց յարտաքին դրունս սրբոյ եկեղեցւոյն. մինչդեռ սպասէաք տեսանել թէ ո՞վ այն վաղայարոյց պատուելին, քանզի քաջ իսկ գիտէք թէ երևելիք քաղաքիս դուն ուրեք երբէք կանխեն ընդ առաւօտն յեկեղեցին, այլ 'ի ժամ սրբասացութեան և կամ Առաքելոցին հգիւ թէ ներկայանան անդ. զկնի սակաւուց դէտ ակնկալեալ տեսաք զարժանապատիւ աւագերէցն, որ իջեալ 'ի կառաց յառաջէր հանդարտ գնացիւք յեկեղեցին. զոր տեսեալ ծառայից յուրախութենէ սրտից գոգցես չփոթեալ և այր զարմանք ելեալ չգիտէին զի՞նչ առնել, ամենեքին ջանացեալ սպասահարկու լինել նորին արժանապատուութեան։ Այլ նորա անտարբեր գրեթէ խաղացեալ յառաջ՝ եմուտ յեկեղեցին զարդարեալ զլանջս իւր Հայրապետական և կայսերական չքանշանօքն, իշխանութեան զա-

ւաղան 'ի ձեռին, և արկեալ զիւրեաւ զծաղկեայ կապուտակագոյն փիլոն. այլ քան զամենայն առաւել, զարդարեալ զանձն խոնարհութեամբ և ճշմարիտն ջերմեռանդութեամբ. քանզի թէպէտև պատրաստեալ էր տեղի վասն նորա 'ի վարդապետի դասուն, դի վաղ ուքեմն տեղի տուեալ էր անտի տէր Գալստանն 'ի դասն աշակերտի: Սակայն նա, Աւագերէցն, նախ քան զերթալն 'ի տեղի իւր՝ մատեաւ յառաջ և խոնարհութեամբ մեծաւ համբուրեաց զսուրբ զԱւետարանն, և զկնի համառօտ ինչ անշշունչ աղօթիւ՝ եկ ապա ջերմեռանդութեամբ 'ի քեմն, և համբուրեաց զսուրբ սեղանն, և ապա իջեալ 'ի վայր կանգնեցաւ 'ի տեղւոջ իւրում: Եկ ապա պատարագիչ քահանայն 'ի խորանէն, և զկնի սակաւուց արտաքոյ քան զսովորականն գունդագունդ սկսեցին ժողովուրդք խոնարհ յեկեղեցին. որոց ամենեցուն 'ի դէմս երևէր յայտնատեսիլ նշան խնդութեան: Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք 'ի նա յաւագերէցն հայէին. սակայն ինքն հայէր և եթ 'ի վեր յերկինս և անմռունչ զոհութիւնս 'ի վեր առաքէր Ամենակալին՝ որ 'ի բաց ապարար 'ի ձեռանէ նորա զբաժակն կործանման: Շարունակեցաւ պատարագն մինչև ցՀայր մերն, և յորժամ ասաց քահանայն «ԵՒ տուր մեզ համարձակաձայն բարբառով Հայրն, եկ ծերունազարդ տէր Գալստանն 'ի սեղանն և ընթերցաւ բարձրաձայն զերկոսին կոնդակս վեհափառ կաթուղիկոսին 'ի լուր ամենեցուն: Թէպէտ սովորութիւն է կանխել նախքան զընթերցումն Հայրապետական կոնդակի զերգ ինչ կամ շարական պատշաճաւոր, սակայն ըստորում սարկաւագ դասակոն՝ յուրախութենէ սրտին թերևս, չէր ներկայ յեկեղեցւոջ, այլ

զողցես չփոթեալ լինն՝ ոչ կարացին զտանել զպատչաճաւորն զայն երգ, ուստի 'ի դանդաղիլ նոցա, սկսաւ սրբակրօն տէր Գալստանն ընթեռնուլ զառաջին կոնդակն ուղղեալ առ սրբակրօն Աւագերէցն՝ որոյ պատճէն և օրինակն է այս :

Մատթէոս
եպիսկոպոսապետ
և կաթուղիկոս ամենայն
Հայոց,
ՌՅԼ. 1859 :

Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաւն Աստուծոյ, եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց՝ ծայրագոյն Պատրիարգ համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական մայր եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Յովհաննու աւագ քահանայի Խաչկեան հայրական օրհնութեամբ ծանուցանեմք,

Զյաւելի անհամաձայնութիւն ձեր և վիճակաւոր Առաջնորդի Զուղայու և Հնդկաստանի Թադէոս արքեպիսկոպոսի տեղեկացեալ արդէն թէ՝ 'ի գրութեանց ձերոց և թէ 'ի նոցայնոցն, արժան դատեալ պատուիրեալ էաք նմա որպէս վոխանորդի մերում, թէ զինչ ինչ հարկ իցէ զառաջս առնուլ այդ օրինակ գայթակղելի երկպառակութեան տարածելոյ ոչ 'ի ձեզ միայն, այլ որ յաւէտ վչտալին է և յոմանս վիճակայնոցդ սիրելի համազգային ժողովրդոց. այլ նա՝ որպէս յայտնի է մեզ 'ի գրութեանց ինչ, նոյնպէս և 'ի նամա'կէ ձերմէ ուղղելոյ յ8 Ապրիլի տարւոյս՝ իբրև ընդ միջին լինն չափիլ ընթացեալ, հրաժարեցուցեալէ զձեզ 'ի փոխանորդական պաշտամանէդ, կոչեալ առ ինքն պատասխանատու

լինել վասն ամբաստանութեանցն, և յոչ անսալն ձեր առաջարկութեան նորա, դադարել 'ի քահանայագործութենէ զուրկ և 'ի պատուանշանայ :

Սակայն մեք զայս խորհուրդ նորա համարեալ խիստս վասն առաւելապէս եւ ամբոխելոյ ժողովրդոյ, առաջարկեալ էաք նմա բաւական վարկանել զհրաժարումն ձեր, և թողուլ զձեզ քահանայագործութեան և յարտօնութիւնս պարգևանշանայ : Բայց որպէս նշմարի՝ օրհասմահու առաջնորդին հասեալ 'ի վերայ, չէ տուեալ նմա ժամանակ հաղորդել ձեզ և օրհնեալ աղդային հասարակութեան տեղւոյդ զիմաստս քանի մի ինչ կոնդակաց մերոց. յորս յետ յոլովադոյն բանից՝ պատուիրեալ էաք հանգուցելոյն բարեյարմար տնօրէնութեամբ և չյիշելով զանցեալսն վերջացուցանել խաղաղութեան խռովութեան և աղդակործան անմիաբանութեան :

Ապաքէն՝ նա ըստ մահկանացուացս օրինի՝ կնքեալէ զկեանսն իւր 'ի տալ զ համար Աստուածային դատաստանին. որում և ամենայն մարդ պարտի հանդիպիլ և ժառանգել զհատուցումն գործոց իւրոց. և ոչինչ 'ի դէպ համարեմք զարգելումն ձեր 'ի քահանայագործութենէ. վասն որոյ տամք կոնդակաւս օրհնութեան հրաման շարունակել այդր զպաշտօնդ եկեղեցական ըստ առաջնոյն և ունել զպատուանշանսդ, հրաժարիլ միայն 'ի փոխանորդութենէ Հնդկաստանի. և պատուիրեմք անյիշատակ առնել զոլորովին զոր ինչ պատահեցան մինչ ցարդ, մանաւանդ զի օրինակ բարի լինել ժողովրդոյ : Եւ արածել զնոսա որպէս արթուն հովիւ՝ այնոլիսի կատարելութեամբք, զորս պատուիրէ սրբազան առաքեալն Պետրոս, «Զերիցունս այսուհետև աղաչեմ ես զերիցակից վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձելոց փառացն յայտնելոց հա-

զորդ, արածեցէ՛ք որ 'ի ձեզ հոսդ է Աստուծոյ, վերակացու լինել՝ մի իբրև ակամայ՝ այլ կամաւ քան Աստուծոյ, մի զօշաբաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի իբրև տիրելովվիճակացն, այլ լինելով ինակ հօտին, զի յերևիլ Հօտապետին ընդունիջիք զանթառամ փառացն պսակ»։ Ա. Պետր. Ե. 1—5։

Զգուշացուցէ՛ք զսիրելի համազգի որդիս կաթուղիկէ Էջմիածնի 'ի վնասակար երկպառակութենէ և 'ի բազմազանդ կրօնից, յորդորեցէ՛ք զնոսա 'ի խաղաղութիւն և յազգասիրութիւն, յուսացեալ յամենաբաւական շնորհս Հոգւոյն Սրբոյ. զի մինչ 'ի գալուստ նորոյ վիճակաւորի, ոչինչ մեասցէ քանարեացն 'ի ձեզ, զոր մատդիր եմք առաքել ըստ ժամանակին։

Ողջանեմք զՀամօրէն քահանայս և զբարեպաշտ հասարակութիւն կողմանցդ այդոցիկ, մատուցեալ նոցա զբարեմաթիւն մեր հայրական։

(Զեռագրեալ) Վշտալից Մատթեոս կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի Տփխիս, 'ի 25 մայիսի 1863. ՌՅԺԲ։ Համար 206։

Եւ յաւարտիլն՝ ընթերցեալ եղև ապա Նորին օծութեան կոնդակն՝ առաքեալ առ բարձր արժանապատիւ տղգասէր պարոն ԱՆԹ Յ. Աբգարեան. որոյ ձև բանիցն ընթանայր օրինակ զայս.

(Տեղի կնքոյ։)

Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաց Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Սրբասանան Առաքելական մայր եկեղեցւոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Հոգեհարազատ որդւոյ կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի և բարեջան եկեղեցվանի Կակսթոս, պարոն Սէթայ Յ. Սարգարեան սիրելւոյ մերում'ի Տէր՝ Քրիստոսաւանդ ողջունիս և հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք։

Որդիական գրութիւն սիրելութեան ձերոյ գրեալ'ի 19 փետրվարի սոյն ամի, զոր ստացաք 'ի 21 ամսոյս պարտնակեալ յինքեան զանհամաձայնութիւն Յովհաննէս աւագ քահանայի Խաչկեան ընդ վիճակաւոր առաջնորդին Զուղայու Թադէոս արքեպիսկոպոսի, և զտարապարտ խռովութիւն ծագեալ'ի ժողովուրդս տեղւոյդ յայս պատճառ և զկարծիսն վասն մեր, որպէս թէ անտարբեր իցեմք յերկպառակութիւնդ այդմիկ՝ և ոչ իսկ հոգրութեան արժանի համարելով զնամականին ձեր և այլոց 'ի վերջաւորութիւն գայթագղելի առարկայիցն խռովութեան։

Սակայն արժան դատեալ զդարձուած գրութեան ձերոյ ոչինչ առիթ ունիմք աւասիկ մեղադրանս զձեօք ածել, գիտելով՝ զի անտեղեակ էք բոլորովին, թէ քանի հոգածութեանց և սրտամաշխարհդածութեանց պատահեցաւ մեզ պատճառ այդ օրինակ անբարոյականութիւն երկուց հոգևորականաց, յառաջեալ ոչ այնչափ յարդարացի բողոքանաց, որչափ 'ի գրգռմանէ պատուասիրութեան, որպէս յայտ առնեն բազմաթերթ պուրակք հակառակ, խօսութեանց եղելոց յերկոսին կողմանս, և թէ զի՞րդ սեպուհ պարտաւորութիւն համարեալ մեզ առնուլ զառաջնայաւալի երկպառակութեան, առաքեալ եմք արդէն զկոնդակս յանուն Սարգսոնորդին 'ի 17 յունիսի 1862 ամի, համար 175, և յ2 նոյեմբերի նոյն տարւոյ համար 341. յորս ծանուցեալնմա ընդ երկար զխաբանս իւր, վասն շուտափոյթ ինքնակամ տնօրէնութեան արգելոյց 'ի պաշտամանց դ յիշեալ Յովհաննէս քահանայն և համարելոյ զնա

գուրկ յամենայն արտաքնութեանց, պարտաւորեալ էաք անյիշաչար լինիլ անցելոցն մեղանաց՝ գնոսա ածելով 'ի մի կողմանէ զքրիստոնէական օրէնս աւետարանական, և 'ի միւսէն զցանկալի խաղաղութիւն սիրելի ժողովրդոյդ բնակելոյդ 'ի Հնդկաստան, ուր պահէքդ արդարև 'ի միջի քաղմաղանդ կրօնից զվառս Աղգութեան և ուղղափառութեան Առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց, և մանաւանդ առաջադրեցաք նմա դրել առ որս արժանն է, և որպէս պէտք լցեն չիջուցանել զհրդեհն խռովութեան՝:

Այլ քանզի չիք ձեր տեղեկութիւն զայսցանէ, ենթադրեմք զի վասնան կենաց Թադէոս արքեպիսկոպոսի Այ. մենափրկչեան, վասն Զուղայու՝ վարագուրեալ իմն է զիմաստս կոնդակաց մերոց, զորս կրկնելն աստանօր աւելորդ վարկանիմք, յուսալովքնդ դադարումն յայսմհետէ անհամաձայնութեան նոյն Բահանայի և քարեպաշտօն ժողովրդոյ մեծանց և փոքունց, որոց ամենեցուն յորդորեմք սիրել զմիմեանս ազգասիրական ջերմեռանդութեամբ՝ փոյթ ունիլ 'ի հաստատութիւն բարեկարգ ազգային վարժարանաց, արմատախիլ առնել զտարապարտ ատելութիւնն, յորմէ ոչ մի ինչ օգուտ, այլ յաւէտ կործանումն ազգութեան և գայթակղութիւն հաւատոյ, որպէս ցաւալի դէպք պատահեալք երբեմն 'ի հայրենիս մեր զոյն հաստատեն: Արդարև յոյս մեծ ունիմք ընդ վերջաւորութիւն քանակուութեանդ այդորիկ առաւել պատուեալ ձեր ամենեցուն զօրէնս ազգասիրութեան, քան զոր ինչ ընդդէմ է նմա, և առաւել յարգեալ զբաղձանս սրտի մերոյ ընդ խաղաղութիւն բարեպաշտ վիճակայնոցդ, քան զոր ինչ դժպհի է մեզ յաւէտ:

Ապաքէն պարտաւորեմք զձեզ, զի որոյ արժան է հաղորդեսջիք զիմաստս կոնդակի մերոյ, յորդորելով զնոսա

'ի սէր և 'ի խաղաղութիւն միաբանական, որպէս դի յա-
ռաքելն մեր 'ի մնողբատյաջողելոյ Տեառն Աստուծոյ՝ 'ի
տեղի հանդուցելոյն նոր վիճակաւոր Առաջնորդ Սրբե-
պիսկոպոս, մի ևս վեր երևեսցի հետք անդամ անցելոյն
անհամաձայնութեանց և տարաձայնութեանց. այլոր ինչ
բարին, կատարեալն և հաճոյքն են Աստուծոյ՝ շնորհօք
Սուրբ Հոգւոյն փայլեսցեն 'ի ձեզ 'ի փառս սրբոյ Եկեղե-
ցւոյ, 'ի պարծանս սիրելի Ազգիս և 'ի մխիթարութիւն
մեր։ Մաղթեմք 'ի Տեառնէ զերկնաճշդիր շնորհս Աստուած-
ութեան իւրոյ 'ի վերայ ձ'ր և 'ի վերայ օրհնեալ ժողովրդ-
դոյս տեղւոյդ։ Ողջունեմք զամենեսեանդ հայրական օրհ-
նութեամբ։

(Զեռագրեալ։) Վշտալից Մատթեոս կաթուղիկոս
ամենայն Հայոց։

Ի Տփխիս, 'ի 21 մայիսի 1863. ՈՒՅԺԲ։ Համար 199։

Զկնի ընթերցման երկուց կոնդակացն դարձեալ ասա
Աւագերէցն առ ժողովուրդն՝ խօսեցաւ ընդ նոսա շնորհա-
շուք կերպարանօք և խմաստալից բանիւք զհամառօտ ինչ
այլկարի ազգու և պատշաճաւոր առաջագրն նպատակին
բանս յորդորական, յայտ առնելովնախ՝ զխորին երկրպա-
գութեամբ զգոհութիւն իւր զԱմենակալէն, որ զկնի երկ-
ամեայ հրաժարման իւրոյ 'ի սիրելի հօտէն իւրմէ՝ արժանի
արար զինքն զգուել զնոսա վերստին սիրով 'ի գաւթիս
տան Տեառն. յորում պաշտօնեայ էր եղեալ ինքն և վերա-
կացու յընթացս անցեալ ութ ամսեան ամաց։ Նմանու-
թ'ամբ ի մի գեղեցիկս օրինակեալ զանձն անդնդահիւր
Մարգարէին, ոչ զերիս աւուրս՝ այլ զերկամ մի ծփեալ'ի
դառնագոյն ծով չարչարանաց, և կլեալ խաչառ 'ի վերա-
հաս փորձանաց ահեղկիտոսէն, ոչ մնացին իրաւունք նոս-

թաղեալ'ի խորս վատահամբաւութեան, այլ՝ հրամա-
ան Աստուածային անկաւ վերստին 'ի տարր իւր կեն-
սածին, և 'ի վերայ վիմի ճշմարտութեան հաստատեցաւ
ոտն նորա միւսանգամ։ Այսպէս ընդ նմին ապա և զիւրն
խորին ակնածութիւն և գոհանակութիւն առ վեհափառ
կաթուղիկոսն ամենայն Հայոց աէր Մատթէոս, որ իբրև
ծայրագոյն Պատրիարք և եպիսկոպոսապետ Հայաստան-
եայց սուրբ եկեղեցւոյ՝ Աստուածատուր իւրով իմաստու-
թեամբ թափանցեալ'ի խորս գժուարին և բազմակնճիռն
գատին, իբրև գատաւոր արդար և անաչառ արարեալ էր
գատ զրկելոյն, ոչ գատապարտեալ զանմեղն այլ պատ-
ուեալ զիրաւունս նորա (աւագ Քահանային) հայրապե-
տական օրհնութեան կոնդակաւն 'ի խաղաղութիւն ժո-
ղովրդեան և 'ի բարձումն ցաւալի երկպառակութեան։
Յաւել 'ի նոյն ապա արժանապատիւ աւագերէցն, զ'ի
որոշ չնորհակալութիւն իւր առ ներկայ եղեալ համօրէն
Հայ ժողովրդականս քաղաքիս վասն սիրաշարժ գումար-
ման նոցա յիկեղեցին 'ի ցոյց ջերմեռանդութեան իւր-
եանց առ Աստուած վասն փրկելոյ զութեամբ նմանեալ
զհովիւ Իւրեանց աշխատաւոր 'ի զարհուրելի ալեկոծու-
թենէ անակնոնելի փորձանաց, և հաստատեալոյ զնա վե-
րստին 'ի նաւահանգիստն խաղաղութեան։ Յուշ արարն նո-
ցա համառօտիւ զանցեալութեամբ անդորրալից
և խաղաղական վիճակ ազգայնոց քաղաքիս։ Ընդ անցեալ
երկամեայ անախորժ և տխուր անցիցն, եցոյց նա զիւրն
'ի սրտէ տրտմութիւն վասն անցելոյ անհաճոյ եղելու-
թեանց. սակայն ոչ կամելով զհնացեալ վերս գժգոհանաց
յերկուստեք բանալ վերստին, արդարացուցանել զանձն
կամ զատապարտանելով զհակառակորդսն, 'ի մէջ ներբ
գծիրանազգեաց Մարգարէին զբանս հոգեշունչս թէ, «Ոչ

ոք է որ առնէ դքաղցրութիւն, և չէ ոք՝ մինչև 'ի մի։ Ա-
մենեքեան խոտորեցան 'ի միասին և անպիտանացան»։
Զոր բան՝ վսեմ ասացուածովք և հրաշալի Աստուածա-
բանութեամբ մեկնաբանեալ 'ի վերայ երեր կնիք բաղում
քանից, թէ անկեալ բնութիւնս մարդկայնոյն, դիւրագայթ
և 'ի փորձութիւնս հակամէտ՝ չկարէ ապաստանարան ու-
մեք լինել 'ի հողածնայ կոչել զանձն բոլորովին՝ արդար և
անմեղ, և թէ «Եթէ ասիցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ու-
նիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ
գոյ»։ Զառաքելականն տպա 'ի մէջ բերեալ դրան՝ յաւել
նա ասել թէ՝ մարդկային անկեալ բնութեան է բուսուցա-
նել յինքեան զփուշ և զտատասկ մեղաց, «առնելով զայն
որ ոչն ինամի. քանզի ոչ նայն է որ գործէ, այլ բնակեալ 'ի
նմա մեղքն»։ Եցոյց նոցա թէ օրպէս չարին հրապոյրք և
երկպառակութեանն՝ զև սողոսկեալ մտանէ բազում ան-
զգամ 'ի մէջ սիրելեաց՝ եղբարց և ազգականաց, տի՛ նաև
'ի մէջ հօր և իւր իսկ զաւակաց, և վեր 'ի վայր կացուցանէ
զխաղաղութիւն զերդաստանին. սակայն չէ պարտ, ասաց
նա, անձնիւր 'ի վերայ կարծեցեալ իրաւանց մերոց յա-
մառեալ, եւ քան զեւս ճարակ մատուցանել խռովութեան
հրդեհին, այլ համարելով զանձինս մարդ սխալական, նե-
րել պարտիմք միմեանց և թողուլ, խաղաղութեանն ջրով
լուանալ զվէրս սրտից մերոց, և դնել 'ի վերայ՝ քրիստոնէ-
ական սիրոյն զպսեղանի. և ապա յաւել սրտաշարժ յոյժ
բանիւք, և արտասուախառն կերպարանօք ասել օրինակ
զայս։ «Հետևեալ իմ օրինակին այնմ որ 'ի վերայ խաչին
»վասն խաչահանուացն աղօթէր՝ ըստ պարտուց պաշտա-
»մանն խոյ և համաձայն սիրաշարժ յորդորանաց վեհա-
»փառ Կաթուղիկոսին, անտես և անյիշելի առնեմ զան-
»ցեալսն, և թողում ամենայն սրտիւ ամենեցուն՝ որոց

» յանցուցեալ ինչ իցեն ընդդէմ իմ բանիւ, զործով, կամ
» մտածութեամբ. նոյնպէս և ես թողութիւն հայցեմ և նե-
» ռումն յայտնեմ, որք կարծեցան թէ զրկեալ ինչ իցեն յի-
» նէն և կամ վշտացեալ՝ ո՛ և իցէ եղանակաւ. ներեցէ՛ք ա-
» զատեմ, ո՛ ուրեակք, ներեցէ՛ք, և եթէ մարդկօրէն մեղու-
» ցեալ ինչ իցեմ ընդդէմ ձեր, չնորհեցէ՛ք ինձ՝ ի սէր Այնմ
» որ եթողն և թողու զօրհանապազ զմեղանս ձեր հեղմամբ
» արեան Միածնի իւրոյ։ Եթէ ոչ թողուցումք մի մեանց
» եղբարք, և մեք ոչ կարեմք հասանել թողութեան, և
» ստուգ ձեւանամբ կնկնելով զՏէրունական զաղօթս յամե-
» մենայն ժամ, «Եւ թո՛ղ զպարտիս մեր որպէս և մեք թո-
» ղումք մերոց պարտապանաց» . . . . . ։ Աստանօր՝ ի
խորոց սրտին հառաչանք և հեկեկումն գոգցես չանի եղին
սիրայորդոր բանիւ Աւագերիցուն, և ընդհատեցին զայն
ոտպէս քանի մի, յորում ժողովուրդն, որ յակնիռս եղեալ
կայր անչշուն, հնչեին տակաւին յունկն նոցա վերջին
բառք պարբերութեանն, «Որպէս և մեք թողումք մերոց
պարտապանաց»։ Վայր մի հոգի առեալ՝ չարունակեաց
սրբակրօն Հայրն զբան իւր վերստին, և այսոքիկ բանիւք
աւարտեաց զիմաստաղեղ խրատ իւր յորդորական ասե-
լով, «Շնորհ ունիմ մեծապէս զարժանապատիւ Եղեղեց-
» պանէն՝ վասն սաստ ընթեռնուլ՝ ի լուր ձեր զկոնդակն
» Վեհափառին. խոստովանիմ նաև զգոհունակութիւն
» իմ՝ սա կարդակից եղբարս իմ, որք յանցելումն երեկոյի
» սիրոյ հրաւիրանօք եկեալ՝ ի տուն մեր հրաւիրեցին զիս
» յիկեղեցին. և քան զամենայն առաւել շնորհ ունիմ մե-
» ծապէս զձէնջ, ո՛ հանդիսատես սիրելիք, վասն ութե-
» տասնամեայ հաստատարիմ որդիական պարտաւորու-
» թեան ձերոյ, զոր լցուցիք անթերի, ՝ի բաւարարութիւն
» անձին իմոյ։ Ամօք ինչ յառաջ, որպէս քաջայայտ է ա-

» մենեցուն, կամ էր ինձ զայս մատուցանել ձեզ զնորհա-
» կալս թիւն և հեռանալ 'ի պաշտօնէս. սակայն զոր ինչ
» խափանեցայ առնել յայժմամ 'ի յորդորանաց մանց 'ի
» սիրելեացդ, զորոց զերեսս աւասիկ տեսանեմ զկամ յան-
» դիման, արդ՝ զկնի անցանելոյ զարհուրելի փոթորկին՝ ոչ
» կարեմ թողուլ 'ի ձեռանէս զպատեհութիւնս զայս. մա-
» տուցանելով ձեզ ընդ հնորհակալութեան խմոյ և զվերջին
» իմ հրաժարական ողջոյն 'ի թեմական պաշտօնէս: Թէ-
» պէտև սրբազան Կաթուղիկոսն օրհնութեան կոնդակս ա-
» իրով հնորհէ դարձեալ նուաստութեանս կալ և մնալ 'ի
» պաշտօնին՝ յոլովմէի յառաջն, սակայն ծերութիւն իմ և
» այլ զանազան խափանարարք արգելաւոր ինձ հանդի-
» սանին սպասաւորել այլ ևս յայսմիկ տան իբրև թեմա-
» կան քահանայ: Եմ կամք և խորհուրդ են յետ այսորիկ
» պարապիլ աղօթից և Աստուածային խոկմանց, և մինչև
» ցկեաց կոչմանս՝ թէ ոչ այլով իւիք՝ զէթ աղօթիւք և բա-
» րեմաղթութեամբ ունիմ նպաստել կենաց և բարեբե-
» թեան սիրելեացդ. զորս յորդորելով կրկին և կրկին ան-
» գամ 'ի սէր միարանական և 'ի խաղաղութիւն, յանձնեմ
» 'ի շնորհս զթութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն, ամէն»:

Աղաչեն մեզ իմ ոչ կարէին ըմբռնել կարգաւ, թո՛ղ թէ պահել 'ի յիշողականիս զբառս և զբան՝ որք հեղհեղեալ իբրև յորձանս հեղեղաց արտաքս զեղուին 'ի ճարտար լեզուէ քարոզչին, և ոչ ունին իմ կարէր հետևիլ բանից նորա, թարց ատ և անդ կորուսանելոյ զբազում հատուածս 'ի գեղեցիկ յարմարութենէն. քանզի իբրև յորդառատ աղբեր ակամէ բղխէին բանք շնորհաց 'ի բերանոյ Աւագերիցուն, և այնչափ զուարճացուցանէին զլսողս որչափ զարմացուցանէին. ուստի զոր 'ի վեր անդր գրեցի՝ գրեթէ գլխաւոր մատունք են յորդորական ճառի նորա, և ոչ բո-

ջանդակութիւն. քանզի լի էր և զեղուն բանն վսեմ ասա-
ցուածովք, զեղեցիկ նմանաբերութեամբ և խմաստուն և
ճարտար դարձուածովք բանից. զոր եթէ կարէի միով և
եթ ունկնդրութեամբ 'ի մտի խմում գանձել անպակաս,
անչուշտ և ես լինէի այր համանման նորա:

Որպէս կանխեցի գրել 'ի վերոյ, լի էր եկեղեցին բազմա-
թեամբ ականաւոր և երևելի ազգայնոց քաղաքիս, որք 'ի
հերուն հետէ հրաժարեալ էին անտի: Երեսք ամենեցուն
նոցա ուրախ և պայծառ, ո՛չ վասն զի յաւիտեցին հակառա-
կորդաց իւրեանց, այլ զի բարձրացաւ կողմն ճշմարտու-
թեան, և եդիտ անիրաւեալն զիւրն իրաւունս վերստին:
Այո՛ քանի՞ մի երեսք որք 'ի սկզբան՝ անդ սպիտակ էին իբ-
րև զբուսաւորումունս եկեղեցւոյ, շառաղնեցան հետզհետէ,
և 'ի վերջոյ դալնկագոյն տգեղացան. բացառութիւնք էին
ընդհանուր պայծառատեսիլ կերպարանաց. սակայն թու-
ով այնչափ նուազունք, մինչ ընկղմիլ նոցա 'ի չիք 'ի մէջ
բազմութիւն երեսաց:

Ու՞ որ բան յաւելցանել այս գեղեցիկ նկարագրու-
թեան վերայ՝ աւելի ենք համարում. սակայն չեմք կարող
չյայտնել մեր գանգատն սրբակրօն Աւագերէցին վասն
իւր հրաժարմանն 'ի թեմական պաշտօնէն. ապաքէն այս
մեծ կորուստ է տեղւոյս Հայ հասարակութեան համար,
քանզի միայն սրբակրօն Հօր ներկայութիւնն եկեղեցումն
բաւական էր զանազան անկարգութեանցն յառաջն առ-
նելու. որ սովոր են անկիրթ և երիտասարդ քահանայքն
գործել, երբ որ չունենան իւրեանց գլխին մին խմաստուն
մեծաւոր: Գուցէ արժանապատիւ Աւագերէցն՝ յառաջ
տեսութեամբ, այս է բարի համարել և յաջողակ վասն իւր
սիրելի հօտի խաղաղութեան և երջանկութեան. ուստի և
մեք 'ի մերոյս կողմանէ փափաքելովք տեղւոյս հասարակ-

ութիւնն մնայ միշտ խաղաղութեան և բարեկամութեան մէջ, խրատ կտամբնորանց սիրով, որ այս երկու տարէն 'ի զուր վնասակար և ազգակործան դժտութիւնին խրատուելով, այսուհետ խաղաղին, և իբրև եղբարք Ջանան օր աւուր սիրել միմեանց և օգնել, և միմեանց օգնականութեամբն յառաջ քայլել լուսաւորութեան ասպարիզի մէջ, բոլորովին հեռի մնալով իւրեանց հոգևորականաց վիճելի մէջ միջամուխ լինելուց. քանզի հոգևորականք առանց ժողովրդոց գլխաւորութեան և խորհրդի, կռվումեն միմեանց հետ, և առանց նորանց հարցանելոյ դադարումեն. վնասն միայն այն անխելք ժողովրդոցն է լինում, որ իւրեանց գլուխն առանց ցաւելու դնումեն Սատանայի տակ։

ՀՆԴԿԱՍՏԱՆ՝

Օրինակ նամակին, զոր Կալկաթայու արժանապատիւ տէր Յովհաննէս Խաչկեան աւագ քահանայն յուղարկեալէ առ Ամենասրբազան կաթուղիկոսն յուլիսի 23 Սեպտեմբերի 1863 . նամակ՝ զոր Նորին վեհափայլ սրբազնութիւնն յիշատակէ 'ի կոնդակի իւրում ընդ ամսաթուով 25 Մայիսի 1863, ուղեալ առ յիշեալ աւագ քահանայն :

Նորին Ամենասրբազան Գահանայապետի Տեառն Տեառն Մատթէոսի Առաքելաշնորհ կաթուղիկոսի, և ամենապատիւ Դիտապետի ամենայն տանս Հայոց՝ օծեալ աջոյն հաճելի պատկառանաց :

Վեհափառ տէր ,

Թիւ գրաւոր պաղատանաց առ ձերդ սուրբ Օծելութիւն՝ ընդ ամին յիններորդն դասեալ, որոյ վերջինն զոյգ օրինակօք 'ի 22 անցեալ ամսոյ , (ունելով 'ի ծոցի զօրինակս երկուց գրութեանց հանգուցեալ Թադդէոս եպիսկոպոսի և մին 'ի Բարձրութենէ ձերմէ առնա , զոր յետ մեռանելոյ նորա՝ կողմնակալք 'ի լոյս հանին , և յօրինակի գրութեան Վեհափառիդ առ Թադդէոս եպիսկոպոսն մեծելեան ձեռներիցութեամբ , փակագծիւ յաւելեալ էր վասն քահանային , իբր՝ այժմ արդելեալ) . այլ յաւիմ սակս չունելոյ պատասխանի և ոչ մին . որոյ և 'ի չլինելն մատեցայ . մատնեցան և Հայ ժողովուրդ մայրաքաղաքիս յանհնարին ճապաղմունս խռովութեան . և տարաբաղդապէս տեսանեմ զի ցնդումն աստի ճապաղել հանդերձեալէ զՀնդկաստան ողջոյն :

Աղաչեմ և յաւէ ինձ ծանրանալ և ծանրացուցանել

ԱՍՏԵՆԱԳԱՐԱՆ
ԱՆԹԻԼԻԱՍ
ԼԻԲԱՆԱՆ
1931
ԱՆԹԻԼԻԱՍԱՆ ՀԱ

Զ հոգս ձեր 'ի ծանրապատում հոգս առաքելական վիճակի ազգայնոց. սակայն վայրկենական յաւելորդութիւն մի՝ բաւէ ըստ կարևորին ամոքել զդառնութիւն վիճակի ազգայնոց կողմանցս, չվաւելչանայ և զպաղատանս ընդունայն. քանզի արտաքոյ ձերդ սպեղանեաց, չունի ազգն հոգևոր աղէտիցն դարման. և եթէ այս չիցէ, մեռեալ ունի համարիլ և ազգութիւնն։

Յետ յուշ յերևան ածելոյ իմ յատենի Զերում ողորմածութեան անթերի գրուածովք զամենայն անցս անցեալ և զառարկայ երկպառակութեանց աստի 'ի շնորհ հանգուցեալ Զաքարիայ եպիսկոպոսի, որ անօրինակ գրուածովդ անչատին յետ մեռելութեան չէ թողեալ տեղի չիթման հրոյն յուզմանց 'ի Հայ հասարակութեան տեղւոյս, որպէս 'ի սմին պարունակեալ վիմատիպ օրինակաւն ունիք տեսանել. (այս էր գիր ցասմնական հրամանի եպիսկոպոսին առ քահանայն, զի եթէ դարձցի 'ի Զուղայ՝ քահանայ է և պատուով ընկալցի. իսկ եթէ ոչ, չկարէ 'ի Կալկաթայ կամ յայլուր վարել զպաշտօնն քահանայութեան), որ յերկրորդումն այսր ամսոյ յաւուրս տպաշխարութեան 'ի լոյս ընծայեցաւ, դիտաւորութեամբ թունաւորելոյ զողջախոհիցն զմիտս, մեռուցանելոյ զիս 'ի պատիւ քահանայութեան և գնելոյ զվ! րս 'ի վերայ վիրաց սրտի պատուեալ և առաջին աստիճանի սեպհական ժողովրդոյ։ Ահա գործ ատելի Աստուծոյ և բայցայտիչ զանդուածոյ հեղինակինեւ գործակատարացն անիրաւի։ Այս այն գրութիւն է, որում ընդդէմ կացեալ հասարակութեան հերքեցին և թոյլ չետուն ընթեռնուլ յեկեղեցին, տալով զիրաւունս տեղական, նախ՝ թէ չունէր նուաստութիւն իմ յանցանս ինչ ընդդէմ եկեղեցւոյ և Առաքելաւանդ կանոնաց՝ արժանաւոր վրիժուն այնմիկ

վճարելոյն անճնաւոր կրիս. Ք. Երկրորդ՝ որ արժանին էր, դատ եպիսկոպոսի և ապիկարիս՝ արքեպիսկոպոս յատեան բարձրագոյն իրաւարարանի Զերդ մեծութեան և սրբազան Սիւնհոդոսի Էջմիածնիդ, հարկ էր սպասել և դատակնքոյն. և այսպէս ոչնչացուցեալ զգրութիւնն առ կենդանութեամբ հեղինակին գրոյն, անդրէն այսօր յետ ամի միոյ զկնի մահուան Եպիսկոպոսին՝ իլոյս ընծայի, և այն յաւուրս Զատիկանի. որով անբովանդակելի տրտմութեամբ լցեալ սիրտք պատուելեաց և ջերմեռանդաց, տեղի դտան դարձուցմանն ոմանց երեսաց յեկեղեցին Զիչրու, ոմանց բողոքականաց յաղթարան, և բազմաց ո՛չ աստ և ո՛չ անդ՝ անիծոյթ գոյշ պատուելի վիճակաւոր քահանայից քաղաքիս՝ 'ի հուրն արծարծողականի՝ կորուստ ազգութեան. զոր իմ նուաստութիւն մեծաւ չրջահայեցութեամբ զամս 18 պահպանեալ պահեաց. չիչխեմ յայտնել զներհակն՝ լռելեայն հակումն 'ի կողմն հակառակորդաց և տալն նոցա քաջալերս յոգաւել վստահութիւն. ըստ որում բաց՝ 'ի միոյն նորեկի՝ որ թուի այժմէն կամակից նոցա, երկոքեան իսկ եղեալ սատարիչ աղմկիս թանձրացելոյ, որպէս գրաւոր ապացոյցքն արդէն առ ձեզ կան։

Արդ՝ նիւթական վէճ աղմկի հասարակութեան յետ մեռանելոյ Եպիսկոպոսին այս է, զի ծանրագոյն մասն ժողովրդեան պնդէ թէ, ըստորում գործ Աղաչնորդին անտեղի, և գրութիւն նորա ընդդէմ անիրաւեցելոյս ապօրինաւոր և քինախնդրութեամբ, մանաւանդ առ կենդանութեամբ Նորին եպիսկոպոսի ոչ յառաջացեալ, և ոչ եկեզեցին մեր պատուեալ զհրամանն, զկնի նորա և այժմ անզօր և անընդունակ համարիմք զոյն վրէժխնդիր գրութիւն, և ընդ մեռեալ հեղինակին տամք թաղիլ յոչնչութիւն։ Իսկ միւս մասն՝ հակադարձ սմին՝ ջանայ, աշխատի

և զուն գործէ վաւերայայտանել զգրութիւն հանգուցեալ Եպիսկոպոսի, և այն յաւէտ ո՛չ 'ի յարգանս մեռելոյն և՞ ո՛չ 'ի պատիւ հոգւով մեռուցելոյս, այլ առանձին ոխով և հակառակ վրէժխնդրութեամբ իրերաց. ո՛հ, զի՞նչ ասացիս հանգուցելոյն, որ մատնեաց զինքն և զդժբաղդս 'ի նոսա գործիք վրիժու, որոյ երկոցունցս վճիռ կախի և եթէ 'ի հրամանէ Աստուծոյ հզօր արտօնութեան:

Իսկ իմս նուաստութիւն, որ յերկուց եղերաց տագնապեալ զելս վրկութեան ոչ գտանէ, ունի իրաւունս պահանջելոյ այսպէս. զի ես 'ի պաշտօն հոգևորականութեանս մեղուցեալ չեմ, ընդդէմ եկեղեցւոյ և Առաքելաւանդ կանոնաց նշանախեցի յանցանս գործեալ չունիմ, ներհակ պատուոյ Եպիսկոպոսին մեղանս չունիմ, անհնազանդութիւն իմն առ Ամենափրկչեան վանքն ցուցեալ չունիմ. այլ ընդհակառակն լեալեմ հաւատարիմ մշակ եկեղեցւոյ ցամն 1861 (նախ քան զվնդրելս՝ ըստ բողոքոյ բազմաց, կանոնադրութիւն ինչ վասն բարեկարգութեան վանաց Զուղայու). որոյ վկայականացն օրինակք թէ՛ մասնաւորապէս համապատասխանեօք Եպիսկոպոսին առ իս և թէ իմոյ առ նա, այժմ առ ձեզկան. բազմապատկաբար առ իս այսր զեղուն կան, 'ի մեծուէ ցփոքունս Կալկաթայու ժողովրդոյ, և իսկ յայնոցիկ՝ որք ապերախտաբար 'ի կրծանումն հոգւոյ իւրեանց՝ ընդ իս վատանան, ո՛չ միով այլ երկոքումբք, յորժամ երկիցս զէմ եղեալէր իմ զքաղաքս լքանել, ունիմ առաքել և զօրինական առ ձեզ՝ եթէ հրամայիցէք առաքել. և եթէ չիցէր այսպէս՝ ոչ զամն 18 կարէի պատուով մնալ աստ 'ի ժողովուրդս. և ո՛չ թագդէոս եպիսկոպոսն առիթս ունելոյ էր՝ ինձ ներհակ արդի անարժան գործոյն, զերքան զչափն յարգել և մեծարել:

Ի մասին վերակոչմանն զիս 'ի Զուղայ, (յայտնի է ո՛ր

հոգւով և գիտաւորութեամբ կոչումն առնէ նա) ունիմ ի-
բրաւունս զլանալոյ զհրամանաւն . քանզի ունիմ կոնդակօք
արձակութիւն մնալոյ 'ի Հնդկաստան ցորչափ իմոյ լիցին
կամք , նախ՝ 'ի հանգուցեալ Յովհաննէս Սուրէնեան ե-
պիսկոպոսէ , և երկրորդ՝ յիւրմէ Թադէոսէ . 'ի հաստատ-
ութիւն սմին՝ առաքեալ ես 'ի Զուղայոյ զհարստամէս յ
մայրն իմ աստ , որ այժմ տասն ամք են յորմէ հետէ կայ 'ի
տան եղբօրս . և ես կապեալ կամ աստ գնեալ կալուածովք՝
չունիմ զոք 'ի Զուղայ մերձաւոր ընտանի . այլ աստ ու-
նիմ եղբայր մի տնաւորեալ գերդաստանաւ , ողորմու-
թեամբ Տեառն ոմնի , որպէս վաճառական որ 'ի քաղաքիս՝
համարումն թէ՛ յազգի մեր և թէ՛ յօտար ազգինս . ուստի
դարձն իմ 'ի Զուղայ , կամ չարժելս աստի անհնարին :
Արդ՝ եթէ այս իցէ յանցանք իմ և օրինազանցութիւն
ընդդէմ Առաքելական բանի և հրամանի Եպիսկոպոսին՝
արժանաւոր պատժոյն ահեղ և սոսկալի՝ զոր միջոցաւն
Թափեալէ յիմ վերայ , թողում իրաւանց և դատաս-
տանի Զերդ հայրապետական ծովացեալ խնամոյ :

Ահա՛ առ ձեզ զեղուն կան գրութիւնք մեր աստի . գու-
ցէ և իցեն նոյնասարաս գրութիւնք դատաղաղից մերոց
Զուղայու և աստի . որովք և փաստիւք նոցին՝ յետ քըն-
նողութեան , յիմաստից և 'ի պարագայից անտի հարկաւ
յայտ յանդիման գալոց է թէ յերկուց անտի ո՞րն ուղիղ և
ապդասիրական և ո՞րն ընդ հակամէտն . չունիմ ես ներ-
հակութիւն ինչ եթէ տուեալ լինիցի ինձ օրինաւք վճիռ սը-
խալանաց , յայտնելով 'ի նմին ժամու զյանցանս 'ի պա-
րագայից գործոց և գնացից իմոց , որոց ամենից ցուցակ
և ապացուցութիւնք առ ձեզ են : Յետ իրաւադատու-
թեան եթէ վճռիցէք զիրաւունս չարաչար վրէժխնդրու-
թեան հանգուցեալ եպիսկոպոսի ըստ գործոց և գնացիցս՝

ինձ հաղորդումն ապ՛ժանի, ընդդիմեցից և զայն սիրով։

Զի որպէս նախընթաց գրութեամբս յայտնեալ եմ Ձեզ՝ ըստ վեհափառութեան, երկրորդեմ և ասացէ՛ զոնեմ փափաք միւսանգամ մտանելոյ 'ի պաշտօն թեմական եկեղեցւոյ տեղւոյս կամ այլ տեղեաց. և թերևս իրաւամբ յոյժ, զի զկնի 33 ամացքրտնահոս աշխատասիրութեամբ զոհելոյ զանձն իմ՝ 'ի ծառայութիւն Աստուածորդւոյ, ընկալայ զսերկեանս հատուցում Եպիսկոպոսէն. մանաւանդ անառողջ բնութիւն անձինս թոյլ չտայ ինձ յայլ աշխատանս ծանր։ Այլ որ ըղձալին է ինձ և իրաւունք ծառանգութեան, մնալս ազատ և անգործունեայ մշակ եկեղեցւոյ, հսկող՝ 'ի վերայ հոգւոյ իմոյ միայն, և այն ո՛չ հպատակ հրամանի Աստուածորդի Ամենափրկչեան վանացս, որ արտօնութեամբն բռնաքարշ զիս արասցէ միւսանգամ 'ի չարչարանս և 'ի ծառայութիւն իւր, այլ որպէս հոգևորականք՝ մի միայն հպատակ Ձեր և Էջմիածնիդ։

Արդ՝ եթէ չունիմ իրաւունս ըստ օրէնի, և արժան է ըստ անիրաւ հալածանաց Եպիսկոպոսին կապեալ և արգելեալ որ մնալ անարգարար և մեռանիլ որպէս դատապարտ և օրինազանց, ուրեմն կնքեցէ՛ք և դուք ձերով իշխանութեամբ՝ 'ի դիւրութիւն սրտի իմոյ. իսկ եթէ ոչ, ապաչեմ, ո՛վ վեհափառ Տէր, բարձէ՛ք յինէն զայսմանականն վճիռ Եպիսկոպոսի և ազատեցէ՛ք զիս 'ի չարաչար հարուածոց որ՝ 'ի մետասաներորդ ժամուս անդրէն թաղծաբար յոտս ողորմածութեան Ձեր պաղատիմ. արարէ՛ք դատ զրկելոյս և մի՛ այլթուլադրէք, արտասուօք աղաչեմ։

Աստուածպատի՛ժ համարիմ մեծաւ ակնածութեամբ կալ և մնալ Ձերում սուրբ օծելութեան անձնադիր ծառայ,

(Ձեռագրեալ։) Վշտագնեալ տէր Յովհաննէս Խաչիկեան

Կարկոթա, 8 ապրիլ 1863։ առաջ բահանայ Հայոց։

ՕՐԻՆԱԿ ՆԱՄԱԿԻՆ

Զոր Կաղկաթայի Հայկազուն ժողովուրդն՝ 75 պատուաւոր ստորագրութեամբք յուղարկեաց առ սրբազնասուրբ Կաթուղիկոսն ամենայն Հայոց 'ի շնորհակալութի Հայրապետական օրհնութե կոնդակացն.

Նախամեծար Արարատեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի, տեառն տեառն Մատթէոսի սրբազնակատար կաթուղիկոսի ամենայն Հայոց, օծեալ աջոյն համբոյր պատկառանաց:

Վեհափառ Տէր,

Եթէ 'ի դէպս բարեյաջողելից, Էրբև հետագայից յիշատակ, թուական ինչ նոր սովոր են կարդել մարդիկ, ապա և մեզ ոչինչ տարագէպ զչորեքտասաներորդ օր Սեպտեմբերի ամսոյ թուական ինչ նոր մեծի բարեբաղդութեան Հայ ազգի ժողովրդականաց քաղաքիս հասարել. քանզի յայնմ աւուր խաղաղասիրուս կոնդակքս սուրբ օրհնութեան Զերոյ՝ որպէս Նոյեան աղաւնւոյ՝ աւետեցին մեզ զհանդարտիչն զարհուրելի հեղեղաց ազգային երկպառակութեան քաղաքիս, ընչելով 'ի խռովեալ և յամբոխեալ միտս մեր՝ զխաղաղութիւն ցանկալի. զեռիւռ յարեան սրբոյ վերստին՝ շաղկապել 'ի մի զբաժանեալ զորդիս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Եւ զի՞նչ տրիտուր վասն այսպիսի ծայրագոյն շնորհաց, եթէ ոչ յետ միանգամ անջինջ գրոշմելոյ զայն 'ի սիրտս մեր անմոռանալի, խոնարհագին և երախտագէտ սրտիւ մաղթել 'ի Տեառնէ՝ երկարել զթել պատուական կենաց Զերոյ, 'ի ծայր գաւազանի իշխանութեան ընդ բազում ամս 'ի պայծառութիւն եկեղեցւոյ, և 'ի փառս տոհմապեալ ազգիս:

Օրհնութեան կոնդակը բարձր սրբազնութեան Զերոյ ուղղեալ 'ի 21 մայիսի, և 'ի 25 նոյն ամսոյ առ արժանապատիւ տէր Յովհաննէս Խաչիկ աւագերէցն մեր, և առ դերապատիւ պարոն Սէթ Յ. Աբգարն, որպէս առ հասարակութիւն մեր, 'ի 14 սեպտեմբերի հասեալ այսր, և ըստ տեղական կարգադրութեան անցեալ 'ի ձեռս յարգոյ պարոն Կարապետ Յ. Վարդանէսեան, եկեղեցական և պաշտօնական նորին, տնօրինեցաւ 'ի նոյնոյ ընթեռնուլ զայնոսիկ յեկեղեցւոջ յառաջիկայ Կիւրակէի, 'ի 20 սեպտեմբերի 'ի լուր ժողովրդեան. յորում աւուր և ինքն տէր Յովհաննէս՝ հրաւիրմամբ վիճակաւոր քահանայից ներկայ եղեալ յեկեղեցւոջ՝ զկնի ընթերցման կոնդակաց, ազդու և սրտառուչ ստենաբանութեամբ շահեաց և քաղցրացոյց զսիրոս ամենեցուն, յայտնելով ընդ Տէրունական բանից և զՁերն օծութեան զսրատուէր՝ զանցեալսն մառանալիսպառ, և անյիշատակ առնել բնաւին զառիթ յաւալի երկպառակութեան ազգայնոց քաղաքիս. և յառաջեալ 'ի բանս իւր ասաց առ ժողովուրդն՝ թէ Թողում սիրով զյանցանս նոցա՝ որոց մեղուցեալ իցեն ընդդէմ իմ, և ես թողուլ խնդրեմ և մոռանալ զայն ինչս, զոր ոք կարծիցէ թէ կրեալ իցէ յինէն. և յետ մատուցանելոյ զշնորհակալութիւն իւր վասն անցեալ ութեամեայ մատակարարութեան վայելեալ բարեաց նոցա, ետ և զհրաժարականն իւր 'ի թեմական պաշտամանց, պահելով զինքն աղատ պաշտօնեայ եկեղեցւոյ և պատուոյ աւագերէց. կնքեաց զբանս իւր մատուցանելով զիւրն 'ի սրտէ գոհութիւն առ ամենակալն Աստուած, որ արժանացոյց զինքն՝ զկնի իրբև երկուց ամաց հրաժարման, տեսանել զհօտ իւր սիրելի 'ի գաւիթս տան Տեառն. ուր յընթացս ութեամեան ամաց մատակարարեալէր նորա զբանն կենաց. կցեաց ընդ նմին

և զգոհութիւն իւր զՁէնչ՝ որ լրաւաղատն եղեալ աղա-
ղոեցիք զինքն յանպատուութենէ և 'ի վերահասն փորձա-
նաց, և այսու առիթ եղէք խաղաղութեան եկեղեցւոյ
բարձեալ խապառ զերկպառակութիւն հրդեհին։

Եւ թէպէտ հրաժարումն նորա 'ի թեմական պաշտօնէն
ըստ իմիք հակառակ կոնդակի բանից օրհնաբեր կոնդակաց
Ձերոյ՝ որք հաւաստեն զնա 'ի նախկին յիւրում պաշտա-
ման, սակայն ըստ որում նա բարեմտութեամբ ոչ կամե-
ցաւ հեռացուցանել զերկրորդ Ս.ւագերէցն 'ի պաշտօնէ
իւրմէ զոր շնորհեալն է նմա հանգուցեալ Թադէոս եպիս-
կոպոսն, և այլ ևս զանազան իրաւացի պատճառաց յա-
ղագս, զորս յաւելորդ համարիմք յիշատակել աստանօր,
արժան դատեցաւ թողուլ զայն պաշտօն իւր 'ի խաղաղու-
թիւն և 'ի սէր միաբանութեան ժողովրդոյ. ուստի և մեք
չկամեցաք ստիպել զնա յայն, և խոնարհաբար հայցեմք 'ի
վեհափառութենէ Ձերմէ ներողամիտ առ նա գտանիլ
վասն այնորիկ։

Ի վախճան գրութեան մերոյ յայտ առնեմք և Ձերդ
վեհափառութեան և զայս, թէ ցաւիմք մեծապէս տեսա-
նել՝ զիջեալիսն եռանդն հոգւոյ նորին տեառն Ս.ւագերի-
ցու, և զիղջէ մեզ տեսանել զայրն ազգաշէն սրտաբեկ և
կամովին հրաժարեալ 'ի պաշտօնէն՝ զոր այլ ոք՝ ցաւիմք
ըստ երկար փորձոյ ասել, ոչ կարէ կատարել բարեպէս, և
որ յընթացս ութևտասն ամաց արժանի զինքն կայոյց աս-
տիճանին յորում վիճակեալն էր՝ և շուք եղ պաշտամանն
իւրով արժանաւորութեամբ։

Պարծանք համարիմք մեծ ջերմեռանդութեամբ ստո-
րագրել զանուանս մեր, Ձերդ դերապատուութեանն շնորհ-
ապարտ և երախտագէտ որդիք և ծառայք։

Ի Կալկաթա, 'ի 28 Սեպտեմբերի Տեառն 1863։

(Ձեռագրեալ)

Էմին Յովսէփ Էմին։	Էմին Միքայէլ Էմինեան։
Յարութիւն Գր. Աբգար.	Յ. Միքայէլեան.
Յարութիւն Աբգար.	Յ. Սվդալ, կրտսեր.
Գէորգ Պետրոս.	Յ. Ա. Սարգիս.
Առաքել Զ. Տ. Առաքելեան.	Կարապետ Սարգիս.
Պետրոս Յ. Սարգսեան.	Յ. Յ. Աբրահամ.
Աղեքսանդր Յ. Աբգարեան.	Յ. Ա. Միքայէլ.
Պօղոս Կարապետեան.	Յովհաննէս Յ. Յ. Սարգիս.
Ս. Ս. Ստեփաննոսեան.	Խաչիկ Մկրտում.
Մարտիրոս Ս. Յովհաննեան.	Կարապետ Մ. Յովհաննէս.
Յովհաննէս Ռ. Շիրխոռեան.	Ա. Ս. Ստեփաննոս.
Միքայէլ Մ. Յովհան.	Յարութիւն Յ. Սարգիս.
Մելքում Մ. Ս. Յովհաննեան.	Ս. Մ. Յովհաննէս.
Բարսեղ Յ. Վարդանէսեան.	Մկրտիչ Ս. Յովհաննեան.
Յարութիւն Մ. Շիրխոռ.	Կ. Գ. Շիրխոռեան.
Յովհաննէս Կ. Սարգսեան.	Մ. Հ. Սարգսեան.
Յովհաննես Գ. Բաղրամեան.	Մ. Խ. Յովակիմեան.
Սիմէոն Գ. Բաղրամեան.	Յարութիւն Դ. Որդանանեան.
Գրիգոր Պ. Մելիտոս.	Զ. Մ. Զօրաբ.
Յար. Մնացական Վարդան.	Մ. Մ. Զօրաբ.
Գալստան Ոսկանեան.	Յ. Մ. Զօրաբ.
Խաչիկ Գրիգոր Սէթ.	Գ. Զ. Մանուկեան.
Մ. տէր Յ. Գալստանեան.	Մինաս Մ. Զօրաբեանց.
Մարգար Գրիգորեան.	Ոսկան Թ. Ոսկանեան.
Յ. Յ. Սվդալ.	Առաքել Զնթլում Սուտեան
Մանուկ Թ. Մանուկ.	J. C. Owen
Մուքէլ Կարապետ Շիրխոռ.	Եղիազար Տ. Յարութիւնեան
Դ. Յ. Մանուկ.	Սարգիս Մ. Շիրխոռ, բժիշկ

Մ. Խ. Մաշխաս. Ստեփաննոս Յ. Ստեփաննոս.
Մարտիրոս Յ. Քամալ. Յարութիւն Մայիլեան.
Յովհաննէս Յ. Քամալ. Ղազար Սիմէոն.
Յովհաննէս Շիրխօռեան. Մանուկ Յ. Դաւթեան.
Խաչիկ Յ. Ավդալեան. Յովհաննէս Ս. Գաբրիէլ.
Թ. Մովսէսեան. Իսահակ Տ. Աբրահամեանց.
Ս. Գ. Բաղրամեանց. Կարապետ Մ. Շիրխօռեան.
Յ. Խ. Միքայէլեան. Յար. Կարապետեան, օրհնագէտ.
Գէորգ Յ. Բաղրամեան. Մէլքում Մարգար.
Աբրահամ Ն. Գալստանեան։

Ուղիղ օրինակ
Սէթ Յ. Աբգարեան.
Յարութիւն Գրիգոր Աբգար.
Գրիգոր Պ. Մելիտոս։

Университетская библиотека